

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն № )

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՇԻՐԱԿԻ  
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵԶ»  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**I.Ընդհանուր դրույթներ**

1. «Հայաստանի ազգային ագրարային Համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարանի) «Շիրակի ակադեմիկոս Մ.Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի (այսուհետ՝ մասնաճյուղ) հիմնադիրը հանդիսանում է «Հայաստանի ազգային ագրարային Համալսարան» հիմնադրամը (Գրանցման համարը՝ 222.160.699243,2012.09.07):
  2. Մասնաճյուղը իրավաբանական անձ չէ, ինքնաֆինանսավորվող կառույց է և Համալսարանի անունից լիազորված է իրականացնելու գործունեություն՝ ղեկավարելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի և սույն կանոնադրություններով:
  3. Մասնաճյուղն ունի իր անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք և այլ վավերապայմաններ:
  4. Համալսարանի և մասնաճյուղի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Համալսարանի և սույն կանոնադրություններով:
- Մասնաճյուղի կանոնադրությունը հաստատվում է Համալսարանի հոգեբարձուների խորհրդի որոշմամբ:
5. Մասնաճյուղի անվանումն է.

հայերեն լրիվ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Շիրակի  
ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղ  
հայերեն կարճ՝ «ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղ.

ռուսերեն լրիվ՝ Филиал фонда „Национальный аграрный университет Армении”  
„Ширакский сельскохозяйственный колледж имени академика М. Туманяна”.

ռուսերեն կարճ՝ „ФШСК НАУА”

անգլերեն լրիվ՝ Branch of Shirak’s Agricultural College after Academician M. Toumanyane of  
“Armenian National Agrarian University” Foundation

անգլերեն կարճ՝ SSAC of ANAU

6. Մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Շիրակի մարզ ք. Գյումրի, Վ. Սարգսյան 26

## II. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ

### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Մասնաճյուղի խնդիրներն են.

ա) Համալսարանի կրթական ծրագրերով միջին մասնագիտական (հիմնական և  
ընդհանուր) կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը,  
վերապատրաստումը և որակավորման բարձրացումը՝ ագրոկենսաբանական,  
տեխնոլոգիական (գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի), ագրարային  
ճարտարագիտական և ագրարային տնտեսագիտական մասնագիտությունների գծով.

բ) ուսումնամեթոդական գրականության ստեղծումն ու հրատարակումը, գիտելիքների  
տարածումը:

8. Իր առջև դրված խնդիրներին համապատասխան՝ մասնաճյուղն իրավասու է.

ա) Համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ ներկայացնել մասնաճյուղի  
կառուցվածքի, Համալսարանի կանոնադրությամբ նախատեսված կառուցվածքային  
ստորաբաժանումների ստեղծման և կառավարման համակարգի, ինչպես նաև  
քննարկել և Համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել  
մասնաճյուղի կանոնադրությունը կամ դրանում փոփոխություններ և լրացումներ  
կատարելու վերաբերյալ առաջարկություններ.

բ) Համալսարանի կանոնադրության համաձայն մասնակցել Համալսարանի ուսումնական  
պլանների, առարկայական ծրագրերի և մեթոդական գրականության մշակմանը,

իրականացնել սույն կանոնադրության 8-րդ կետի «թ» ենթակետով նախատեսված գործունեության տեսակները.

- գ) գիտամանկավարժական գործունեության ասպարեզում ակնառու նվաճումների համար թեկնածուներ ներկայացնել Համալսարանի գիտխորհրդին՝ Համալսարանի պատվավոր կոչումների, մրցանակների, հուշամեդալների և այլ խրախուսումների համար, առաջարկություն ներկայացնել ուսանողներին անվանական կրթաթոշակների սահմանման և հատկացման վերաբերյալ.
- դ) Համալսարանի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի և մասնաճյուղի ենթանախահաշվի համաձայն տնօրինել սույն կանոնադրության 47-րդ կետով նախատեսված ֆինանսական միջոցները.
- ե) ստեղծել մարզաառողջարարական բազաներ, սննդի և այլ կենցաղային օբյեկտներ.
- զ) տեղի բանկային հիմնարկությունում բացել ընթացիկ հաշիվ.
- է) Համալսարանի լիազորությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր,
- ը) օգտագործման նպատակով, սահմանված կարգով ձեռք բերել գույք և սարքավորումներ:
- թ) իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.
- 1) միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության կազմակերպում.
  - 2) գյուղատնտեսական ուսումնափորձական տնտեսությունների կազմակերպում և ստացված արտադրանքների իրացում.
  - 3) սովորողների հասարակական սննդի կազմակերպում.
  - 4) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.
  - 5) հանրակացարանաբնակ սովորողների կենցաղի կազմակերպում և սպասարկում.
  - 6) սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում.
  - 7) խորհրդատվական ծառայության իրականացում.
  - 8) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ սահմանված այլ գործունեության տեսակներ:
  9. Մասնաճյուղի գործունեության ընթացքում ստացված եկամուտները օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:
  10. Մասնաճյուղը պարտավոր է.

- ա) գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինչպես նաև Համալսարանի և մասնաճյուղի կանոնադրություններին և ներքին իրավական ակտերին համապատասխան,
  - բ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով վարել գործավարություն, հաշվապահական հաշվառում, տեղեկություններ և հաշվետվություններ ներկայացնել համապատասխան մարմիններին,
  - գ) ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը,
  - դ) ապահովել աշխատողների աշխատանքի և հանգստի պայմաններ,
  - ե) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:
11. Մասնաճյուղի գործունեության ընթացքում ստացված եկամուտները օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

### III. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Մասնաճյուղի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

Համալսարանը մասնաճյուղի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված ուսումնամեթոդական հարցերի համակարգման ու կառավարման իր գործառնություններն իրականացնում է Համալսարանի միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող ուսումնական ստորաբաժանման (քոլեջի) (այսուհետև՝ քոլեջ) միջոցով:

13. Մասնաճյուղի կառավարման մարմիններն են մասնաճյուղի խորհուրդը (այսուհետև՝ խորհուրդ) և տնօրենը:

Խորհրդի լիազորությունների ժամկետը 3 ուսումնական տարի է:

14. Մասնաճյուղի խորհրդի անդամների ընդհանուր թվաքանակը չի կարող գերազանցել 21-ը, բայց ոչ պակաս:

15. Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են տնօրենը, տնօրենի տեղակալները, գլխավոր հաշվապահը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և Համալսարանի ներկայացուցիչները:

Խորհրդի անդամների առնվազն 25 տոկոսը կազմում են քոլեջի ուսանողները, որոնց ընտրում են ուսանողների ինքնակառավարման մարմինների, ընդհանուր ժողովները:

Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել քուլեջի այլ աշխատողներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնագետներ:

Մասնաճյուղի խորհրդի նիստը համարվում է իրավագոր նրա անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Այդ ընթացքում տնօրենի և մասնաճյուղի խորհրդի միջև տարաձայնություն առաջացնելու դեպքում հարցը տեղափոխվում է Համալսարանի գիտական խորհուրդ, որտեղ դրա քննարկմանը մասնակցում են նաև մասնաճյուղի խորհրդի անդամները: Մասնաճյուղի խորհրդի ընդունված որոշումները կենսագործվում են տնօրենի հրամաններով:

16. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Համալսարանի գիտխորհուրդը՝ մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ:

17. Մասնաճյուղի խորհուրդը

ա) քննարկում և Համալսարանի հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում մասնաճյուղի կանոնադրությունը, առաջարկություններ է ներկայացնում դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման, ինչպես նաև մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

բ) Համալսարանի գիտխորհրդի քննարկմանն է ներկայացնում մասնաճյուղի զարգացման ծրագիրը, ինչպես նաև միջազգային համագործակցության գլխավոր ուղղությունները, ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանը և դրա կատարման տարեվերջյան արդյունքները.

գ) իրականացնում է ընթացիկ վերահսկողություն տնօրենի գործունեության նկատմամբ.

դ) Համալսարանի գիտական խորհրդին առաջարկություններ է ներկայացնում նոր մասնագիտությունների և մասնագիտացումների ստեղծման, ուսումնական պլանների և նրանց փոփոխությունների, առարկայական ծրագրերի վերաբերյալ.

ե) Համալսարանի գիտխորհրդի քննարկմանն ու հաստատմանն է իր աշխատակարգը.

զ) ընտրում է խորհրդի նախագահ, նախագահի տեղակալ (տեղակալներ) և քարտուղար.

է) Համալսարանի գիտխորհրդի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ մասնաճյուղի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ.

ը) քննարկում է տնօրենի, նրա տեղակալների, մյուս վարչատնտեսական աշխատողների և դասախոսների հաշվետվություններն ու հաղորդումները, ինչպես նաև մասնաճյուղի

գործունեության տարեկան հաշվետվությունը, որը Համալսարանի տարեկան հաշվետվության հետ համատեղ ներկայացվում է Համալսարանի հոգեբարձուների խորհրդի հաստատմանը:

- թ) քննարկում է մասնաճյուղի տարեկան հաշվապահական և այլ հաշվետվություններ.
- ժ) Համալսարանի հետ համաձայնեցնելով՝ սահմանում է մեկ ուսանողի համար ուսման վճարի չափը.
- ի) քննարկում և առաջադրում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները.
- լ) Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ մասնաճյուղի դասախոսական կազմը սահմանված կարգով համալրելու, որակավորման աստիճան և Համալսարանի պատվավոր կոչումներ ու մրցանակներ և անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին.
- խ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ.

Դասախոսական կազմը համալրվում է մրցույթային կարգով:

Մրցույթը հայտարարվում է մասնաճյուղի խորհրդի առաջարկով: Մրցույթն իրականացվում է Համալսարանի գիտական խորհրդում, իսկ մրցույթով անցած անձանց աշխատանքի նշանակվելու հրամանագրումը կատարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով.

18. Խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով: Խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով:

**Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:**

19. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի մեկ ձայնի իրավունք: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

**Խորհրդի նիստերն արձանագրվում են:**

20. Խորհրդի նիստերը, որպես կանոն, բաց են: Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել քոլեջի աշխատողները, ուսանողներն ու նրանց ծնողները, հասարակության և կազմակերպությունների ներկայացուցիչներ:

21. Ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, մեթոդական աշխատանքների, դասախոսների մանկավարժական հմտության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով մասնաճյուղում սահմանված կարգով ստեղծվում են ամբիոններ, ուսումնամեթոդական, գիտամեթոդական, մանկավարժական խորհուրդներ, որոնք գործում են մասնաճյուղի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերով:
22. Մասնաճյուղում գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և մասնաճյուղի կողմից սահմանված կարգով:
23. Միջին մասնագիտական կամ այդ մակարդակի այլ կրթական ծրագրի իրականացման որակի նկատմամբ պետական վերահսկողությունը, մասնաճյուղի տեսչական ստուգումը, պետական ատեստավորումը և հավատարմագրումն իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
24. Մասնաճյուղի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի և սույն կանոնադրության պահանջների կատարման, կրթական ու ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են լիազորված պետական մարմինները, Համալսարանը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ մարմինները:
25. Մասնաճյուղի անմիջական ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն աշխատանքի է նշանակվում ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով:  
Մասնաճյուղի անմիջական ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որն աշխատանքի է նշանակվում ռեկտորի հրամանով՝ հինգ տարի ժամկետով:  
Մասնաճյուղի տնօրենը՝
- ա) կազմակերպում է մասնաճյուղի գործունեությունը և օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն, գործում է մասնաճյուղի անունից, ներկայացնում է նրա շահերը.
  - բ) իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ և կարգադրություններ, որոնց կատարումը պարտադիր է ուսանողների և աշխատողների համար.
  - գ) Համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ սովորողների ընդունելության, ազատման վերականգնման, տեղափոխության վերաբերյալ հրամաններ արձակելու վերաբերյալ.

դ) ապահովում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի և մասնաճյուղի խորհրդի որոշումների և ռեկտորի հրամանների կատարումը.

ե) կազմակերպում է մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը.

զ) հրավիրում է մասնաճյուղի խորհրդի, տնօրինության նիստեր և ապահովում դրանց սերտ համագործակցությունը.

է) Համալսարանի լիազորությամբ, Համալսարանի անունից կնքում է պայմանագրեր.

ը) Համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում փոխտնօրեններին, հաշվապահին և ուսումնական կառուցվածքային ստորաբաժանումներին ղեկավարներին աշխատանքի նշանակելու և աշխատանքից ազատելու մասին.

թ) ըստ բնագավառների կատարում է աշխատանքի բաշխում փոխտնօրենների և մյուս ղեկավար աշխատողների միջև: Իր բացակայության ժամանակ տնօրենի պարտականությունների կատարումը դնում է փոխտնօրեններից մեկի վրա.

ժ) իրականացնում է մասնաճյուղի ֆունկցիոնալ գործունեությունից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի և սույն կանոնադրությանը չհակասող այլ լիազորություններ.

ի) մասնաճյուղի տնօրենը ի պաշտոնե Համալսարանի գիտական խորհրդի անդամ է:

26. Ռեկտորի և տնօրենի միջև սահմանված կարգով կնքվում է աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով, որով նախատեսված են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները Համալսարանի հետ և նրա աշխատանքի վարձատրության պայմանները:

### III. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

27. Մասնաճյուղի կառուցվածքը մասնաճյուղի խորհրդի առաջարկությամբ Համալսարանի կառուցվածքի հետ համատեղ ռեկտորի ներկայացմամբ հաստատվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ: Կառուցվածքային ստորաբաժանումների կազմը և իրավասությունները որոշվում են Համալսարանի

կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերով:

28. Մասնաճյուղի խորհուրդը Համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ մասնաճյուղի կառուցվածքում դեպարտամենտներ, ամբիոններ (սեկտորներ), բաժիններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, ինչպես նաև լուծարելու վերաբերյալ:
29. Մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման գլխավոր ստորաբաժանումը ամբիոնն է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող դասախոսներին և հետազոտողներին: Ամբիոնը կարող է լինել նաև համամասնաճյուղային և անմիջականորեն ենթարկվել տնօրենին (փոխտնօրենին): Ամբիոնի իրավասությունը որոշվում է Համալսարանի կանոնադրությամբ և Համալսարանի ամբիոնի օրինակելի կանոնակարգով:
30. Մասնաճյուղի ամբիոնը ստեղծվում է մասնաճյուղի խորհրդի առաջարկությամբ՝ սահմանված ընթացակարգով:
31. Ամբիոնը ղեկավարում է վարիչը՝ մասնաճյուղի քոլեջի խորհրդի առաջարկությամբ Համալսարանի գիտական խորհրդում սահմանված կարգով նրա ընտրվելուց և Համալսարանի ռեկտորի հրամանով պաշտոնի նշանակվելուց հետո:

#### **V. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

32. Մասնաճյուղում ուսուցումը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, սույն կանոնադրության և համապատասխան կանոնակարգերի համաձայն:
33. Մասնաճյուղի շրջանավարտների ընդունելությունը Համալսարանի բակալավրային համակարգ կատարվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

#### **VI. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՎ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԸ**

34. Մասնաճյուղի աշխատակիցներն են դասախոսները, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական աշխատողները:
35. Մասնաճյուղի աշխատողներն իրավունք ունեն՝

- ա) կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու մասնաճյուղի կառավարմանը.
- բ) պետական կրթական ընդհանուր չափորոշիչի շրջանակներում ընտրելու և օգտագործելու կրթական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ ուսուցման ու դաստիարակության մեթոդիկաներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր, գիտելիքների գնահատման մեթոդներ.
- գ) սահմանված կարգով օգտվելու տեղեկատվական ֆոնդերից, ուսումնական, գիտական, սոցիալ-կենցաղային, բուժական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից.
- դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու մասնաճյուղի ղեկավարության հրամանները (կարգադրությունները):

36. Մասնաճյուղի աշխատողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրով, նախատեսված այլ իրավունքներ:

37. Մասնաճյուղի աշխատողը պարտավոր է՝

- ա) կատարել մասնաճյուղի կանոնադրության պահանջները, պահպանել ներքին կարգապահական կանոնները և ուսումնական կարգապահությունը.
- բ) բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները.
- գ) ապահովել իր գործունեության պատշաճ մասնագիտական մակարդակը:

38. Մասնաճյուղի ուսանողներ են համարվում կրտսեր մասնագետի կրթական ծրագրով միջին (հիմնական և ընդհանուր կրթություն) և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթություն ստանալու համար քոլեջ ընդունված և ռեկտորի կողմից հրամանագրված անձինք: Սովորողների ընդունելությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

39. Մասնաճյուղի ունկնդիրը ռեկտորի հրամանով նախապատրաստական դասընթացներում, մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման բաժանմունքում սովորելու համար ընդունված անձն է: Ունկնդիրը կրթական ծառայություններ ստանալ մասով օգտվում է ուսանողի իրավունքներից:

40. Մասնաճյուղի ուսանողի իրավունքներն ու պարտականություններն որոշվում են ՀՀ օրենսդրությամբ, ներքին կարգապահական կանոններով:

41. Մասնաճյուղի ուսանողն իրավունք ունի՝

ա) ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և ձեռք բերել գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ.

բ) վճարովի հիմունքով ստանալ երկրորդ մասնագիտություն կամ օգտվել լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից.

գ) մասնակցել ուսանողական ինքնակառավարման մարմինների, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին.

դ) անվճար օգտվել մասնաճյուղի գրադարանից, տեխնիկական միջոցներից.

ե) մասնակցել մասնաճյուղի կարևորագույն հարցերի քննարկմանն ու լուծմանը.

զ) սահմանված կարգով ստանալ պետական կամ այլ կրթաթոշակ և ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

42. Մասնաճյուղի ուսանողը պարտավոր է՝

ա) կատարել մասնաճյուղի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.

բ) խնամքով վերաբերվել մասնաճյուղի և Համալսարանի գույքին.

գ) հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը.

դ) կատարել միջին և նախնական մասնագիտական կրթության ծրագրերի պահանջները:

43. Ուսանողների համար մասնաճյուղի կողմից սահմանվում են նյութական ու բարոյական խրախուսման ձևեր:

44. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի պահանջները չկատարելու, մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները, ներքին կարգապահական կանոնները խախտելու համար ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական ներգործության միջոցները՝ ընդհուպ մասնաճյուղից հեռացումը:

45. Մասնաճյուղի ուսանողների ինքնակառավարման և նրա շահերը պահպանող մարմինը մասնաճյուղի ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը մասնաճյուղի և Համալսարանի համապատասխան մարմիններում, քննարկման ներկայացնում ուսանողության առնչվող հարցեր: Ուսանողական խորհրդի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է խորհրդի կանոնակարգով:

## VII. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

46. Մասնաձյուղի գույքն են կազմում Համալսարանի կողմից օգտագործման տրված հիմնական և շրջանառու միջոցները, ինչպես նաև մասնաձյուղի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքը և միջոցները:
- Մասնաձյուղի գույքը, Համալսարանի գույքն է:
47. Մասնաձյուղի ֆինանսական ռեսուրսների գոյացման աղբյուրներն են.
- ա) Համալսարանի կողմից օգտագործման նպատակով հատկացված գույքը.
  - բ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից մասնաձյուղին հատկացված միջոցները:
  - գ) միջոցներ, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, խորհրդատվական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից.
  - դ) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած նվիրատվությունները, բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները և կտակված գույքը.
  - ե) Համալսարանի անունից (համաձայնությամբ, լիազորությամբ) աշխատանքների կատարումից, ծառայությունների մատուցումից և սույն կանոնադրությամբ նախատեսվող Համալսարանի կողմից երաշխավորված այլ տնտեսական 8-րդ կետի «Թ» ենթակետով նախատեսված գործունեությունից ստացված եկամուտները:
48. Մասնաձյուղը գործում է ինքնաֆինանսավորման կարգով և նրա գործունեության շրջանակներում բոլոր ֆինանսական գործառնությունները և ծախսերը (աշխատավարձի վճարում, գույքի ձեռք բերում, տնտեսական գործառնական այլ ծախսեր և վճարումներ) կատարվում են բացառապես մասնաձյուղի ֆինանսական մուտքերի (ռեսուրսների) և ՀՀ պետբյուջեից մասնաձյուղին հատկացված միջոցների հաշվին: Այդ նպատակով բանկային հիմնարկությունում բացվում է ընթացիկ հաշիվ, որտեղից ստացված գումարները կարող են ծախսվել ըստ Համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված մասնաձյուղի ենթանախահաշվի՝ մասնաձյուղի կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման համար:

49. Մասնաճյուղը Համալսարանի կողմից սահմանված կարգով պլանավորում և կազմակերպում է իր տնտեսական գործունեությունը, Համալսարանի անունից մատուցում է ծառայություններ, կատարում աշխատանքներ, պատասխանատվություն է կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ պատշաճ կարգով կատարելու, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքները խախտելու համար:
50. Մասնաճյուղը կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարումներ, ապահովում աշխատողների աշխատանքի և հանգստի նորմալ պայմաններ:
51. Հաշվապահական հաշվառման օրենքին համապատասխան, Համալսարանի կողմից սահմանված կարգով, մասնաճյուղը վարում է հաշվապահական հաշվառում, համապատասխան հաշվետվություն է ներկայացնում տեղական, հարկային և ՀՀ կենսաթոշակային համակարգի համապատասխան մարմիններին, հաշվետու է Համալսարանին, նրա հաշվետվության և հաշվեկշռի տվյալները մտնում են Համալսարանի հաշվետվության և հաշվեկշռի մեջ:
52. Մասնաճյուղին տրված գույքը կարող է տնօրինվել միայն Համալսարանի հանաձայնությամբ:
- Մասնաճյուղը պատասխանատվություն է կրում իրեն տրամադրված գույքի պահպանության, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև գույքին պատճառված վնասի համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:
53. Աշխատողների վարձատրության չափը, հաստիքները և վճարման կարգը մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ հաստատում է Համալսարանի ռեկտորը:
54. Աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:

## **VIII. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ**

### **ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

55. Մասնաճյուղի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների վերակազմակերպումն ու լուծարումը կատարվում է օրենսդրությամբ, Համալսարանի և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: